ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 24.10.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/66

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.10.2017թ. թիվ 03/26-3/18700-17 գրությամբ «Մաքս-Պրինտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետև՝ Պատվիրատու) 09.10.2017թ. թիվ ԴՎԱ/3547 գրության հիման վրա, 16.10.2017թ. թիվ 03/26-3/18700-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Մաքս-Պրինտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետև՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Մաքս-Պրինտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

<< գնումների բողոքարկման խորհուրդը 17.10.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/[1182814]-17 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «Մաքս-Պրինտ» ՍՊԸ-ին (այսուհետև՝ Ընկերություն):

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 19.10.2017թ. ժամը 11:15-ի նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր և իր լիազորված ներկայացուցչի մասնակցությունը:

Ընկերության տնօրենը նիստի ժամանակ հայտնել է հետևյալը՝

Ընթացակարգի հրավերի 8.13 կետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝

1) հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակում է տեղեկագրում.

2) իր և գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակում է տեղեկագրում: Հանձնաժողովի այն անդամները, որոնք հանձնաժողովի աշխատանքների մասնակցում են հայտերի բացման նիստից հետո հրավիրվող նիստերին, ստորագրում են սույն ենթակետում նախատեսված հայտարարությունները, որոնք տեղեկագրում քարտուղարը հրապարակում է ստորագրմանը հաջորդող աշխատանքային օրը.

3) էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում սույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային

փոստի հասցեին սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

4) համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Սույն ենթակետով սահմանված ժամկետում ապրանքի ամբողջական նկարագիրը ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Ամփոփելով, Ընկերության տնօրենը հայտնել է, որ gnumner.am կայքում բացմանը հաջորդող օրը հրապարակված չի եղել վերոհիշյալ արձանագրությունը, ուստի մտածել է, որ Ընկերությունը հաղթող չի ճանաչվել կամ տեխնիկական պատճառներով նիստը չի կայացել: Ինչպես նաև տնօրենը հայտնել է, որ ունենալով առողջական խնդիրներ զբաղվել է իր բուժմամբ և Խորհրդին է ներկայացրել իր տեղամասային պոլիկլինիկայից տեղեկանք:

Ընկերության տնօրենը Խորհրդին հայտնել է, որ բազմիցս մասնակցելով պետական գնումներին բոլոր պատվերները Ընկերության կողմից կատարվել են պատշաճ կերպով և ժամանակին, ինչպես նաև այն, որ Ընկերությունը չի խուսափում և պատրաստ է կատարել ցանկացած առաջադրանք և նույնիսկ եթե անհրաժեշտություն կա պատրաստ է ներկայացնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և կրկին մասնակցել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/10» ծածկագրով ընթացակարգին:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկ-ները և դիրքորոշումը</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 09.10.2017թ. թիվ ԴՎԱ/3547 գրությամբ ներկայացրել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգի թիվ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 11, 14, 15, 16, 17, 18, 19 և 20-րդ չափաբաժինների մասով «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով Ընկերությունը «armeps» էլեկտրոնային համակարգի ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցվել է երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

«Մաքս Պրինտ» ՍՊԸ-ի կողմից պահանջվող փաստաթղթերը ընդհանրապես չեն ներկայացվել, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը, որոշել է «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 19.10.2017թ. ժամը 11:15-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է 09.10.2017թ. թիվ ԴՎԱ/3547 գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2017/66 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԱՄ-2017/66 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 12.09.2017թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետով արձանագրել է, որ 23.09.2017թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա Ընթացակարգի թիվ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 11, 14, 15, 16, 17, 18, 19 և 20-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ն:

3. Նույն արձանագրության 4.2 կետով որոշվել է հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4. Պատվիրատուն 23.09.2017թ. ծանուցմամբ Ընկերությանը հայտնել է, որ վերջինս «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/10» ծածկագրով ընթացակարգի գնահատման արդյունքում 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել թիվ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 11, 14, 15, 16, 17, 18, 19 և 20-րդ չափաբաժինների մասով և պարտավորվում է սույն ծանուցումը ստանալուց հետո հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 03.10.2017թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ արձանագրել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/10» ծածկագրով ընթացակարգով «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ն 23.09.2017թ. թիվ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 11, 14, 15, 16, 17, 18, 19 և 20-րդ չափաբաժինների մասով ծանուցվել է որակավորման փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից պահանջվող փաստաթղթերը ընդհանրապես չեն ներկայացվել, ուստի գնահատող հանձնաժողովը 03.10.2017թ. որոշել է մերժել «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ի հայտը:

6. 19.10.2017թ. ժամը 11:15-ին տեղի ունեցած Խորհրդի նիստի ժամանակ «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ի տնօրենը հայտնել է, որ բացման նիստի արձանագրությունը gnumner.am կայքում հայտերի բացմանը հաջորդող օրը հրապարակված չի եղել, ուստի մտածել է, որ Ընկերությունը հաղթող չի ճանաչվել կամ տեխնիկական պատճառներով

նիստը չի կայացել, որից հետո տվյալ ժամանակահատվածում ունեցել է առողջական խնդիրներ և զբաղվել է իր բուժմամբ, որի արդյունքում որակավորումը հիմնավորող փաստաթղթերը ընդհանրապես չի ներկայացրել:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.10.2017թ. թիվ 03/26-3/18700-17, ՀՀ պաշտպանության նախարարության 09.10.2017թ. թիվ ԴՎԱ/3547 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենքի) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և ***հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները),***

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Նույն հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում

են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Նույն հոդվածի 7-րդ մասը սահմանում է, որ ***սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնահատման արդյունքում հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ-1-ի 8.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Սույն ենթակետով սահմանված ժամկետում ապրանքի ամբողջական նկարագիրը <u>ընդհանրապես չներկայացվելու դեպքում</u> հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում <u>մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը</u>*** և նույն նիստում

հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: ***Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝***

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: ***Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: <u>Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:</u>***

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Այսպիսով, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 12.09.2017թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետով արձանագրել է, որ 23.09.2017թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա Ընթացակարգի թիվ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 11, 14, 15, 16, 17, 18, 19 և 20-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության 4.2 կետով որոշվել է հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Ընթացակարգի քարտուղարը 23.09.2017թ. ծանուցմամբ Ընկերությանը հայտնել է, որ վերջինս «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/10» ծածկագրով ընթացակարգի գնահատման արդյունքում 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել թիվ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 11, 14, 15, 16, 17, 18, 19 և 20-րդ չափաբաժինների մասով և պարտավորվում է սույն ծանուցումը ստանալուց հետո հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգի քարտուղարը 05.10.2017թ. ծանուցմամբ Ընկերությանը հայտնել է, որ Ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ին ծանուցվել է ներկայացնելու Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, սակայն մասնակցի կողմից վերը նշված փաստաթղթերը ընդհանրապես չեն ներկայացվել, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը, մեժել է «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ի հայտը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 03.10.2017թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 4 սրձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ արձանագրել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/10» ծածկագրով ընթացակարգով «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ն 23.09.2017թ. թիվ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 11, 14, 15, 16, 17, 18, 19 և 20-րդ չափաբաժինների մասով ծանուցվել է որակավորման փաստաթղթերը ներկայացնելու

վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից պահանջվող փաստաթղթերը ընդհանրապես չեն ներկայացվել, ուստի գնահատող հանձնաժողովը 03.10.2017թ. որոշել է մերժել «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ի հայտը:

19.10.2017թ. ժամը 11:15-ին տեղի ունեցած Խորհրդի նիստի ժամանակ «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ի տնօրենը հայտնել է, որ բացման նիստի արձանագրությունը gnumner.am կայքում հայտերի բացմանը հաջորդող օրը հրապարակված չի եղել, ուստի մտածել է, որ Ընկերությունը հաղթող չի ճանաչվել կամ տեխնիկական պատճառներով նիստը չի կայացել, որից հետո տվյալ ժամանակահատվածում ունեցել է առողջական խնդիրներ և զբաղվել է իր բուժմամբ, որի արդյունքում որակավորումը հիմնավորող փաստաթղթերը ընդհանրապես չի ներկայացրել:

Խորհուրդն, ուսումնասիրելով «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերը նշված հիմքերը, ***արձանագրում է, որ «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ն 23.09.2017թ. ստացված ոչ ավտոմատ ծանուցմանն ի պատասխան***՝ որակավորման չափանիշները հիմնավորող հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը սահմանված ժամկետում և կարգով ներկայացնելու վերաբերյալ ***ընդհանրապես չի ներկայացրել հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը***:

Այսպես, Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը***՝ էլեկտրոնային փոստի միջոցով ***ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը,*** բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: ***Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման***

նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է*** պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ սահմանված ժամկետում և կարգով՝ ընդհանրապես չներկայացնելով որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 16.10.2017թ. թիվ 03/26-3/18700-17 գրությամբ «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00145961) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել և «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ին ընդգրկել

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ